

**ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի
Ներքին աուդիտի բաժնի 2017թ. առաջին կիսամյակի հաշվետվություն**

Ներքին աուդիտի բաժինը ղեկավարվելով «Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ- 728 հրամանագրի 1.6 կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N 143-Ն հրամանի պահանջները, ինչպես նաև ՀՀ Արագածոտնի մարզպետի կարգադրությունները, 2017թ. առաջին կիսամյակում ներքին աուդիտի բաժինը ներքին աուդիտ է իրականացրել 22 միավորներում ներառելով 2014, 2015, 2016 թվականները:

Ներքին աուդիտի բաժինը համակարգի գնահատման աուդիտ է իրականացրել 17 «Պետական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ներում, մարզպետարանի, իսկ 4 բժշկական կենտրոնն ՓԲԸ-ներում և 1 առողջության կենտրոնն ՊՈԱԿ-ում իրականացրել է ֆինանսական աուդիտ:

Աուդիտորները աուդիտորական ուսումնասիրությունների ընթացքում հայտանաբերել են բազմաթիվ թերություններ, որի վերաբերյալ կազմվել են արձանագրություններ: Արձանագրություններում տեղ գտած բացահայտումների ու եզրակացությունների հիման վրա կազմվել են նախնական և վերջնական հաշվետվություններ:

22 վերջնական հաշվետվությունները քննարկվել են ներքին աուդիտի կոմիտեի կողմից գումարված նիստերում և կազմվել են արձանագրություններ, այնուհետև կազմվել են նաև գործողության ծրագրեր:

Կոմիտեի ղեկավարի կողմից հանձնարարվել է պետական բյուջե վերականգնել ՀՀ պետական բյուջե **518044** ՀՀ դրամ: